նել իւր մէջ միւս գիտութիւնքն աստուածաբանութեան եւ իմաստասիրութեան հետ: Ի 1159 ամի իրաւագիտութիւնն ընդ աստուածաբանութեան սկսաւ ընթանալ, թէ եւ խուն ինչ ժամանակ արտաքսուելով Փարիզից՝ նորէն մուտ գտաւ բժշկականութեան հետ եւ սկսեալ ի 1230 Թուից չորեսին ուսուցչական ժողովքն կարգադրուեցան անդ:

Փարիզու համալսարանն իւր կազմուածոյն յատկութեամբ Բոլոնիից առաւել համբաւ ստացաւ. ի Փարիզ համալսարանական ընկերութիւնն բաղկացած էր յուսուցչաց. ուսանողք բնաւին ստորադասեալք էին: Համալսարանն բաժանեալ էր յեօթն մարմինս. զորս էին երեք ուսուցչական ժողովք, այս ինքն աստուածաբանական, կանոնաւական իրաւանց եւ բժշկական, եւ չորս ազգք՝ յորոց կազմուած էր արուեստից ժողովքն, այս ինքն՝ փիլիսոփայութիւնն, որոյ անդամներից ընտրուէր միշտ Րէկտօրն: Չորս ազգերն էին՝ Գաղղիացիք, Պիկարդացիք, Նորմանք եւ Անգղիացիք, յետոյ Գերմանացիք փոխանակեցին Անգղիացւոց:

Օքսֆորդի, Կամբրիճի համալսարանքն՝ Փարիզու, Պադուայի, Նէապօլսոյ, Րէճճիոյ, Հռովմայ եւ Տրէվիզիոյ՝ որ յԻտալիա՝ համալսարանաց պէս հին են. Մօնպէլիէ, Օրլէան, Թուլուզ ի Գաղղիա. Սալամանկ ի Սպանիա երեքտասաներորդ դարում հիմնուեցան:

Գերմանիան միայն չորեքտասաներորդ դարում ունեցաւ:

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱԽՈՅՍ.

Ընդունելի ճշմարտութիւն է՝ զի իւրաքանչիւր ազգի մտաւորական եւ ուսումնական վիճակն կը կշռուի ինքնուրոյն մշակած գրականութեամբն:

Սա այնքան պարզ մի փաստ է՝ որքան ստոյգ եւ անհերքելի է՝ որ իւրաքանչիւր արհեստաւորին հմտութիւն կը կշռուի արհեստին վերաբերեալ գործիքներովն եւ նոքօք կգործենայ արհեստագէտն:

Թէպէտ գրականութիւնը ընդհանուր առմամբ յիշելով՝ տակաւին շատ դժուար է գտնել մի ազգ՝ որ բարձր զարգացում եւ մտաւորական մեծ արժանաւորութիւն ունենալով հանդերձ՝ նոցա համեմատ եւ անթերի գրականութիւն ունենայ. վասն զի գրականութիւնն ունի հին եւ նոր մատենագրութեան երկու ճիւղեր, որք զարձեալ զանազան բաժանմունք կը կրեն, եւ կայ ազգ՝ որ ըստ հին մատենագրութեանց եւ պատմականին՝ բաւական հարուստ գրականութիւն ունի, կայ ազգ՝ որ բանաստեղծական եւ փիլիսոփայականին մէջ ճոխ է, կայ ազգ՝ որ նոր մատենագրութեամբք եւ բազմատեսակ զարգացած՝ եւ թարգմանութեամբք ընտիր քաղուածներ մթերած եւ ճոխացած գրականութիւն ունի, կայ ազգ՝ որ եւ ոչ մինը չունենալէ զատ՝ լեզու եւ գիր անգամ չունի: Թողումք յիշել թափառական ցեղերը: Ի սոցանէ պիտի հետեւի՝ որ եթէ գրականութիւնը իւր բոլոր եւ ընդարձակ նշանակութեամբ ըմբռնուի՝ շատ դժուար է մատնացոյց լինել մի այնպիսի ազգի վերայ՝ որ՝ նոյն իսկ ի ներկայ ժամանակիս՝ ըստ ամենայնի կատարեալ եւ մշակեալ գրականութիւն ունենայ:

Գոհութիւն Աստուծոյ՝ որ՝ Հայոց ազգին՝ թէ եւ ոչ աւելի զարգացած եւ ճոխ՝ սակայն եւ այնպէս գէթ միջնակարգ համարելի գրականութիւնը նկատելով, ոչ սակաւ սփոփանք կը գտնեմք, որ եւ ըստ բաւականին երաշխաւորութիւն կհամարուի մի քանի գրական բաժանմունքներով Հայոց մտաւորական եւ ուսումնական վիճակին ոչ

խօսքս բարձի թողի եղած լինելոյն համար, և այս ապացոյց է՝ նա և՛ որ Հայն իւր ամենածանր և վտանգաւոր տագնապներ կրած դարերում անգամ՝ ըստ չափու կարողութեանց և զարգացման ժամանակին՝ ջանացած և յաջողած է ընդունել և տարածել Ազգիս մէջ նա և մատենագրական և ուսումնական գիտութիւնքը, դաստիարակութիւնքը, բաւական մատենագրական վաստակներ և թարգմանութիւնքը։ Հոգ չէ՝ եթէ ունեցածն ըստ մեծի մասին կրօնական, եկեղեցական, պատմական, մեկնաբանական և աստուածաբանական եղած համարուին, որ ժամանակին պահանջն և արդիւնքն այսպէս տրամադրած է, սակայն բաւական չէ՞ իմանալոյ համար՝ որ վերջապէս Հայն ևս անտարբեր և անզգայ մնացած չէ։

Բայց սակայն սակաւ վիշտ է տեսնել՝ որ այս սփոփանաց և պարծանաց եթէ ոչ բոլոր՝ գէթ ամենամեծագոյն մասն կվերաբերի մեր նախնեաց ջանից և արդեանց, և իրաւունք է՝ որ նոր սերունդն բաւականանայ նախնեօքն և նոցա վաստակօք և եթ պարծենալով՝ առանց իմանալոյ և աշխատելոյ՝ որ ինքն ևս պարտաւոր է նոր մատենագրութեամբք՝ ըստ կարևորութեանն և պահանջման ժամանակիս՝ նոր թարգմանութեամբք՝ մանաւանդ դասական հեղինակութեամբք՝ հետզհետէ աւելի ևս զարգացնել, ճոխացնել և պայծառացնել Հայկական գրականութիւնը, ո՛չ թէ ուրեմն՝ զի մի և նոյն ժամանակ պարտաւոր է նա և նախնեաց ընտիր ընտիր և պատուական մատենագրութիւնքը պատրաստել, ընտիր օրինակներով բաղդատել՝ միանգամայն ի լոյս տալ ի վայելս բարեպաշտից և ընթերցասիրաց՝ ևս ի պէտս և ի յազգուրդ բազմախոյզ և հետաքըննին բանաքաղութեան օտարազգի բանասիրաց։

Ի՞նչ, մի՞թէ պարծանք է միմիայն թատերական՝ աւելի վիպասանական և կամ չար կրից ծառայող՝ և այն ոչ աւելի պիտանի և ոչ ի բարի բարոյական վարս հրապուրող հեղինակութիւնք կամ թարգմանութիւնք ունենալ, նոցա համար աշխատիլ, դրամ տալ, և նոքօք գրականութիւնը ծաղկեցնել կարծել՝ մինչդեռ ի ներկայս աւելի դասական գրեանց մեծ պէտք և կարօտութիւն կայ, որոյ համար կարի սակաւ անձինք կխորհին և կջանան, իսկ նախնեաց մատենագրութիւնքը ի լոյս տալոյ համար՝ առաւել ևս սակաւ անձինք կմտածեն՝ որք ևս դարձեալ ձրի ձեռք բերել և գտանել ջանալով։

Ո՞ւմ մեղադրելի պիտի լինիմք։

Ճշմարիտը խօսելով՝ ամեն կարգի և աստիճանի անձինք ևս առանց բացառութեան առաւել կամ նուազ մեղապարտութիւն կըկրեն և միշտ պիտի կրեն մինչև որ սթափին՝ և ըստ կարեաց իւրաքանչիւրն հոգայ ինչ որ իւր բաժնին անկ է։

Արդարև կան սակաւաթիւ եռանդուն ազգայինք՝ որ կզգան Ազգիս ի ներկայս կըրած դասագրեանց վերաբերեալ մեծ կարօտութիւնքը, և ըստ կարեաց կհետևին դասագրքեր պատրաստել և տպել տալոյ, սակայն որքա՜ն կվշտանան՝ երբ կտեսնեն՝ որ շատ անգամ ամենք դրամական կարօտութիւն չունենալով՝ ոչ թէ միայն աշխատութեանն փոխարէնը չեն գտներ, այլ և տպագրութեան ելն ծախուց պարտ-

քով բեռնաւորեալ՝ կճնշուին և կվհատին խաւար։ Ըլլը կոպեն հին մատենագրութիւններ, և եթէ ի սէր բարեկամութեան և ի հաճոյս իշխանաւորաց օգնականներ և կարեկիցներ չգտնեն, հազիւ հարիւրական հատ կվաճառուին, և մնացեալքն կապասեն և փոշւոյ և ցեցոյ բաժին կդառնան. իսկ տպագրութեան ծախքը դարձեալ կծանրանայ ի լոյս ընծայողին վերայ, և եթէ շատ ապել տար՝ որպէս զի աժանագին*) ծախուի և շուտով սպառուի տպագրեալն, խորտակիկ և անօգուտ յուսով խաբուած է և կխաբուի. և եթէ սակաւաթիւ տպագրուի՝ անշուշտ թանկագնոյ կլինէ, և քանի տարիներու կարօտ է՝ որ տպագրեալն ամբողջ վաճառուի, և մինչև վաճառուի՝ տպագրութեան և թղթոյ ևլն ծախքերը ՚ի դրամին բաւական ժամանակ ըստ այսմ պարապ մնալն որքան կարժէ և ինչ օգուտ կլինի կամ պիտի լինի տպագրել տուողին։

Իսկ եթէ ձեռնհաս և նշանաւոր վանօրէից վերայ պարտաւորութիւն դրուի՝ որ նոքա ապել տան, պէտք է մտածել և կշռել նոցա բազմազգի կարօտութիւնքը և անհրաժեշտ կարևորութիւնքը, պէտք է նկատել ելևմուտքը, պէտք է կշռել նա և հետզհետէ յաւելացած և զգալի եղած պարտաւորութիւնքը՝ և ըստ այնմ վրամասկան տագնապի ենթարկելն, ներելի՞ է առաջարկել՝ որ նոքա միշտ գրքեր եւս ապպին կամ ապել տան, որով և աւելի պարտուց ենթարկվին, սպասելով որ ապագրած գրքերը մի օր կվաճառուին, բայց թէ երբ՝ մտածէ որ գտնես։ Իսկ եթէ իշխանական ձևով վարուի՝ որպէս զի տպագրուածն վաճառուի, սակայն և այս միշտ և ամեն ժամանակ ներելի չկրնար լինել և պատշաճ միջոց չէ։

Արդեօք ի՞նչպէս անել պէտք է և ի՞նչ միջոցով։

— Առ այժմ միակ և յուսատու հնարն է՝ մի կամ մի քանի ընկերութիւն հաստատել և տարեկան մինչև հազար ռուբլի շահ բերող դրամագլուխ կազմել, որով հեղինակները և թարգմանիչները կքաջալերուին՝ որ իւրեանց աշխատութիւնք եթէ արժանաւոր լինին՝ պիտի կարողանան նպատակին ծառայել՝ ոչ թէ միայն տպագրուելով, այլ և ի պսակ իւրեանց աշխատութեանց մի քանի հարիւր օրինակ եւս կամ իւր նոցա գինը վարձ–նուէր ստանալով, և այսպէս բազմոց բարենախանձ օրինակ կտան և կքաջալերեն զմիմեանս գեղազանցել, և դասական գրեանց պէտքերը հետզհետէ կլրանան, և Հայոց գրականութիւն աւելի եւս կծաղկի և կպայծառանայ։

— Աստի որքան շնորհակալեաց արժանի կհանդիսանան այն ամեն սիրելի ազգայինք՝ որք երբեմն մէկ մի գիրք և կամ մի քանի գրքեր իւրեանց ծախուք կապեն և աժանագին կցրուեն։ Սակայն կարօտութիւնն այնքան մեծ և զգալի է՝ որ նոցա արդիւնքն աւելի նշանակութիւն ստացած չէ և ոչ կարևոր նպատակին նպաստած։

(*) Աժանագին ապելոյ և ծախելոյ համար եւս ամեն տեղ յաջողութիւն չգտնուիր. և մեծ մարբերութիւն կայ ի Փարիզ և ի Պոլիս, կամ ի Մոսկով և ի Տփխիս, և կամ աստ ի Ս. Էջմիածին և յԵրուսաղէմ տպուածներուն մէջ ըստ պահանջման տեղեկան գրութեանցն՝ և ծախուցն և այլոց.

Ուրեմն քանի՞ առաւել գովեստից և շնորհակալեաց արժանի է Մեծ. Պ. Յովսէփ Պ. Իզմիրեանցն՝ որ նորարծարծ իմն և մեծաշխոյժ եռանդեամբ կուխտէ, ասպարէզ կիջնէ և կհրաւիրէ Հայ հեղինակները և գրասէրները՝ որ այսուհետև աշխատին արժանաւոր երկասիրութիւնք մանաւանդ Հայկաբանո-Ընկան և Աղգային պատմո-Ընկան դասագրեանք պատրաստելոյ, և եթէ պահանջուած պայմաններուն համաձայն լինին (որք ամսագրոյս անցեալ Մարտի թերթին մէջ հրատարակուեցան), ընդունին մրցանակ՝ իւրեանց աշխատութեանց ի պսակ։ Այսպիսի բարի դիտում ունեցող նպատակ և մրցանակ որքան յարատև և հաստատուն լինի՝ ոչ ապաքէն Պ. Իզմիրեանցի անունը և արդիւնքը անմահ յիշատակութեանց և յաւիտենական փառաց արժանի կը կացուցանէ, և երբ բուն և բարի նպատակը իրագործուի և յարդիւնս ազի՝ սակայն փառք և մխիթարութիւն նմին պիտի լինի, և ասկէց աւելի ի՞նչ վարձ և փառաւոր պսակ կարող է ընդունել։

Սիրելի է մեզ յուսալ՝ որ Պ. Յովսէփ Իզմիրեանցն ինչպէս նա և մի և նոյն եռանդով վառուած Աղգասէր անձինք կը բարեհաճին այսպիսի նպատակը մշանջենաւորել մի դրամագլուխ նուիրաբերելով և յաստակացնելով, որով միանգամայն այլոց բարի և նախանձելի օրինակ կհանդիսանան՝ թէ մանաւորապէս և թէ ընկերութեամբք այսպիսի վսեմ՝ նշանաւոր և կենսական նպատակ նուիրագործելոյ համար։

Մ.

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՇԻՒ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ-ԱՐՂՈՒԹԵԱՆՑ Հ. ԴՊՐՈՑԻՆ.

Խմբագրոնեան Աբարտ ամսագրոյ.

Հոգաբարձութիւնս օրիորդական Հոգևոր Դպրոցի Հայոց Աղէքսանդրապոլ քաղաքի բացելոյ յիշեալ Ղահրամանայ Երկայնաբազուկ-Արղուութեանց համաձայն 18րդ յօդուածոյ կանոնադրութեան նոյն դպրոցի՝ ընդ այսմ առաքելով ի խմբագրութիւնդ զտարեկան համառօտ հաշիւ մուտից և ծախուց օրիորդական դպրոցիս վասն անցեալ 1874 ամի, խոնարհաբար խնդրէ հրատարակել զայնս յէջս պատուական և ազգաշահ լրագրոյդ Արարատայ ի գիտութիւն համայն հայազանց։

Հոգաբարձուք Յովսէփ Աւ. քահանայ Կոստանեանց
Պ. Յովհաննէսեանց
Ռուբէն Մելիք-Ադամեանց
Սարգիս Միրզայեանց

Հմր. 3

յ31 Մարտի 1875-դ

ՅԱղէքսանդրապոլ.

Ա. Հ-ի-Ի-ի-ի-ի-ի մաս.

Նախագահ Հոգաբարձութեան Դպրոցի Փոխանորդն թեմին Աղէքսանդրապոլու, հրս հոգաբարձուք, յորոց մինն վարէ զպաշտօն գանձապահութեան և թուղակաստացութեան, և միւսն զպաշտօն քարտուղարութեան դպրոցի առանց վարձու. երկու կանդիտատք, յորոց մինն ի պատճառս հրաժարման միոյ յանդամոց հոգաբարձութեան՝ եմուտ ի պաշտօն հոգաբարձուի։

Քառասուն պատգամաւորք։

Բ. Ո-ա-ա-ն-ի-ի-ի մաս.

Ոչսուցիչք.

Ռ.

Պրոնուսոյց Հայաստանեայց ուղղափառ դաւանութեան տարեկան . . 120